Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

«21» դեկտեմբերի 2021թ.
ք. Երևան Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Վ. Առաքելյան – ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության պետ,

Անդամներ

Լ. Ասրիյան - ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժնի պետ,

Ռ. Քյոսայան - ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժնի գլխավոր մասնագետ,

Ի. Յազիչյան - ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի փորձագիտական և ապրանքագիտական բաժնի գլխավոր հարգափորձ,

Գ. Գևորգյան – ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի փորձագիտական և ապրանքագիտական բաժնի ավագ հարգափորձ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության գնումների բաժնի պետ

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 41-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Ակսոն ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 06938872, հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, տարածք 82/31 , էլ հասցե՝ info@akson.am, հեռ.՝ +37491526185
«Բիդ ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02280652, հասցե՝ ք. Երևան, Մ. Խորենացի 8/28, էլ հասցե՝ infobidauction@gmail.com, հեռ.՝ +37441113121

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. <u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>

1. Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ «Բիդ ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.2-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.1.5 կետում՝ «քաղաքացիություն» դաշտում նշված է տվյալ անձի ազգությունը քաղաքացիության փոխարեն:

2. Մյուս մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. <u>Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը</u>

1. «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացվում են հավելված 1-ում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

<u>5. Հանձնաժողովի կայացրած որոշումները</u>

Հանձնաժողովը որոշեց.

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ծանուցել «Բիդ ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները՝ ներկայացնելով շտկված հավելված 1.2-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

6. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

«ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի դեկտեմբերի 23-ին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Վ. Առաքելյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Լ. Ասրիյան
	_____	Ռ. Քյոսայան
	_____	Ի. Յազիչյան
	_____	Գ. Գևորգյան
Գնումները համակարգող՝	_____	Ա. Աղաբաբյան

Հավելված 1

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (%)	
		«Ակսոն ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ	«Բիդ ապրանքա-հումքային բորսա» ՍՊԸ
		Առաջարկվող տոկոս	Առաջարկվող տոկոս
1	Աճուրդների կազմակերպման ծառայություն	0.1	0.248